

ՀՏԴ 891.981-93 Սկրտումյան

ԳՄԴ 84 Հ-5

Մ 804

Սկրտումյան Նարինե

Մ 804

Առակներ և լեզենդներ: Միջին և բարձր տարիքի
դպրոցականների համար/Նարինե Սկրտումյան,- Եր.:
Հեղինակային հրատարակություն, 2010 թ., 48 էջ:

Եզոպոսյան առակները դարերի ընթացքում թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով և մշակվել բազում գրողների կողմից: Մույն ժողովածուում ընդգրկված են այդ առակների՝ հեղինակի կողմից մշակված և չափածո դարձված տարբերակները, որոնցում պարսավանքի են ենթարկվում մարդկային արատներն ու բացասական հատկանիշները՝ հպարտությունը, մեծամտությունը, սնապարծությունը, պարծենկոտությունը, ագահությունը, երախտամոռությունը, խորամանկությունը, տգիտությունը, կեղծավորությունը, նախանձը:

ՀՏԴ 891.981-93 Սկրտումյան

ԳՄԴ 84 Հ-5

Երկրորդ՝ վերանայված հրատարակություն:

© Ն. Սկրտումյան, 2010 թ.

© Ն. Սկրտումյան, 2012 թ.

ISBN 978-9939-53-574-6

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԱՌԱՎՆԵՐ ԵՎ



ԼԵԳԵՆԴՆԵՐ

II ՄԱՍ

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ԱՌՅՈՒԾԸ, ԱՂՎԵՍՆ ՈՒ ԷՇԸ.....5

ՄԵԾԱՄԻՏ ԷՇԸ.....14



ԱՆԽԵԼԶ ԼՈՒՍԻՆԸ.....18



ԿՐԻԱՆ ՈՒ ԱՐԾԻՎԸ.....20



Ա ԳԱՀ ՍՐՁՅՈՒՆԸ.....22



ԾԵՐՈՒՆԻՆ ԵՎ ՄԱՀԸ.....24



ԻՇՈՒԿՆ ՈՒ ԳԱՅԼԸ.....28

ԱՆԲԱՆՏ ԱՎԱՆԱԿԸ.....31



ԿՈՒՐԱՄՈՒԿԸ.....35

ԷՇՆ ՈՒ ԱՌՅՈՒԾԸ.....38



ԱՍՏՂԱ ԳՈՒՇԱԿԸ.....43

ԱԶԱՂԱՂՆ ՈՒ ԳՈՂԸ.....45



ԱՌՅՈՒԾԸ, ԱՂՎԵՍՆ ՈՒ ԷՇԸ

Ծեր առյուծը րկարացավ,
Մեջքի ցավը շար սասրկացավ,
Ձեռ ու ոտից ընկավ իսպառ,
Իսկ աղվեսը գլխապարտառ,
Շրտալ եկավ հիվանդարես...
-Բարո՛ւ եկար, քալո՛ր աղվես:
-Տագա՛ր բարի, իմ հարգելի,
Տենց լուրն առա սարսափելի,
Մորդ եկա, մի ճար անեմ,
-Քեզ դարմանեմ, ոտքի հանեմ:
-Թե ուզում ես, որ ողջ մնամ,
Էն աշխարհը ես չգնամ,
Ավանակին շուր մորս բեր,
Թե չես ուզում մնալ անրեր:
Սիրտս նրա միսն է ուզում,
Դա է միակ բուժիչ դեղը,



Երբ որ Էջին փորս քաշեմ,
Կապարհնվեմ տեղնուտեղը:
-Ապրա 'ժ կենաս, հզո 'ր արքա,
Քեզանից թանկ ոչ ոք չկա,
Ինչ ուզեցիր, ես կճարեմ,
Թեկուզ կյանքովս վճարեմ:
Խորամանկը զոհին գրավ,
Գլուխս տվեց, խելքը մորավ.



- Տե՛յ, աչքդ լույս, իշո՞ւն քեռի,
Որքան շատ ես դու բախարաւոր,
Արքան շուրտով պիտի մեռնի,
Քեզ է ընտրել նա թագաւոր:
Ասում է, որ չկա ոչ ոք
Քեզնից խելոք ու առաւել,
Ազնիվ, զորեղ, արդարադատ,
Միայն քեզ է խիտր հաւանել:

Դու՝ խելքի ծով, մեր աչքի լույս,
Միակն ես դու, անբարակույս,
Առաքինի ու ողջամիտ,
Պարկեշտ, բարի, արդարամիտ:
Դե՛, գլուխդ էլ չբանեն՝,
Արի՛, նրա կուշարը փանեն՝,
Մահից առաջ թող քեզ օրհնի
Եվ սուրբ աջը գլխիդ դնի:
Պարզամիտը գովեսարներից
Քաջակերպեց, թներ առավ,
Իր էջ խելքից, ցավոք սրտի,
Նենգ աղվեսի ծուղակն ընկավ:
Երբ առյուծը զոհին փեսավ,
Չհամբերեց, վրա հասավ,
Սակայն էջը լեղապարան,
Թե՛ ոնց եղավ, մահից պրծավ,
Նույն բուպեին փախավ անբան...

Խորամանկի չարչարանքը,
Ողջ փանջանքը ջուրը լցվեց,
Իսկ հիվանդը նորից պնդեց,
Որ իշուկին մոտը բերի...
-Դե՛, մի քիչ էլ դու համբերի,
Դժվար գործ է, մե՛ծն արքա,
Բայց, ճա՛րս ինչ, այլ ելք չկա:
Նա վերադին անդառ մտավ,
Փառամոլին հագիվ գրավ,
Կրկին երգեց իր հին երգը,
Վերսկսեց կեղծ գովերգը,
Մտի փոսրակն էլի բացեց
Ու պոչավոր սրեր ասեց:
Կվանակը վիրավորված՝
Մուրասանին կորուկ ասաց.
-Դու այլևս ինձ չես իսաբի,
Իմ աչքերը էլ չես կապի,



*Մեկ ուրիշին հիմարացրու,
Գովարանիր, արքա դարձրու:
-Ի՛նչ վախլուկ ես, ի՛նչ փոքրոզի,
Եղի՛ր դուլզն-ինչ մեծահոզի,
Մահամերձը հենց քեզ տեսավ,
Առույզացավ, տեղից ելավ,
Որ համբուրի իր ընտրյալին,
Նսպճեալ օրհնի, դնի գահին,*

Իսկ դո՛ւ, անխե՛ղբ,
Քո շահն անգամ չհասկացար,
Երախտամոռ անպետքի պես
Թագը թողիր ու հեռացար:
Աջքակապը խորամանկեց,
Քամի արեց, լեզու թափեց,
Այդ փառասեր չորքորանու
Խելքը կերավ, դարձյալ իսարեց,
Չեռաց նրան առաջն արավ,
Վարատողջի մոտը քարավ:
Ու այս անգամ անգութ արքան
Խելագուրկի վերջը քովեց,
Ազահորեն նրան խժռեց,
Խարդախին էլ բան չբովեց:
Էջի գանգը երբ որ պոկվեց,
Ծեր աղվեսի մոտ գլորվեց,
Խորամանկը ծուծը առավ,



*Գաղտնագրողի ինքը կերավ՝
Ի հատուցում իր ջանքերի,
Այդքան կրած փանջանքների:
Արյունաբերուն գանգը փեսավ,
Անկուշտի պես վրա հասավ,
Դես պրտեց, դեն պրտեց,
Ապուշ կորած շուրջը զննեց:
-Բա որտե՞ղ է էդ ուղեղը,-*



Տարցրեց նա տեղնուտեղը:

Աղվեսն էլ՝ թե.

-Առյո՛ւծ արքա, խաչը վկա,

Ավանակը ուղեղ չունի,

Զուր մի՛ փնտրի,

Միևնույն է, դու չես գտնի:

Եթե ուղեղ նա ունենար,

Մի՞թե նորից քեզ մոտ կգար...

07.05.11.

ՄԵԾԱՄԻՏ ԷՇԸ

Օրերից մի օր
Էշը գլխիկոր,
Ասրժոն արձանը
Իր մեջքին դրած,
Դանդաղկոր, կամաց
Գնում էր քաղաք:
Իսկ ճանապարհի
Ամեն մի քայլին
Ով հանդիպում էր,
Խոր սկնածանքով
Երկրպագում էր
Տիրոջ ոսկեձուլի
Ու մեծ արձանին:
Երկարականջր
Շար ոգևորվեց.
Սխալմամբ կարծեց,



*Թե ամենքն իրեն
Չարիագանց հարգում,
Սիրում են, պարվում,
Գլուխ են տալիս,
Ծնկի են գալիս:
Այդ մեծամիտք
Իր դունչը րնկեց,
Քիթը վեր ցցեց*

Ու ճամփի կեսին
Կանգնեց, միտք արեց.
-Ինչպե՛ս թե, մարդիկ
Ինձ հարգեն, պատվեն,
Գերին իոնարհիվեն,
Լուռ երկրպագեն,
Իսկ ես բե՞ռ կրեմ...
Ծեր իշապանը
Նենց գլխի ընկավ,
Թե ինչու էշը
Նանկարժ կանգ առավ,
Ճիպոտը վերցրեց,
Տարավ ու բերեց,
Նիմար իշուկին
Մի լավ տուր փվեց:
-Ա՛յ երկարակամջ,
Տիմա՛ր ավանակ,



*Տո հասարագլոն 'լիս,
Տո էշի՛ քուռակ,
Խեւքոյ գլուխոյ
Իսկույն հավաքիր,
Մի՛ թե մարդն էշին
Կերկրապագի:
01.08.08.*

ՃՆԽԵԼՔ ԼՈՒՄԻՆՔ

Լուսնյակը հնուր
Դերձակին խնդրեց,
Որ իրեն համար
Մի զգեստ կարի,
Այն լինի հարմար,
Նախշուն կրորից,
Վրան էլ փայլուն
Կոճակներ շարի:
Ու թե պատվերը
Նա բավարարի,
Երդվեց, որ հասարար
Լավ կվճարի:
Վարպետը լուսնի
Խնդիրքը լսեց,
Փոքր-ինչ մրսածեց,
Պատասխան տվեց.



*-Ա՛յ խելապակաս,
Խելքի՛ց պարուհաս,
Մի օր դու գեր ես,
Մի օր էլ՝ նվազ,
Անճիր պահանջդ
Ո՛նց բավարարեմ,
Քո հագույլ ինչպե՛ս
Ես հագուար կարեմ:
01.05.11.*

ԱՐԻԱՆ ՈՒ ԱՐԾԻՎԸ

Կրիան մի օր երկինք նայեց,
Արծվի ճախրով շար հնայվեց
Ու միտք արեց. «Ախ, երանի՛
Ես էլ թռչել կարենայի»:
Զորեղ թռչնին հույժ նախանձեց,
Արցունք թափեց ու թախանձեց,
Որ վերջինս հնար անի,
Իրեն թռչել ուսուցանի:
Մրարեւր խիստ շվարեց,
Դանդաղկուրին հարցում արեց.
-Ինչպե՛ս պիտի երկինք թռչես,
Երբ սողուն ես, թևեր չունես:
Ո՛վ է րեսել թռչող կրիա,
Անխելք ես դու, Ասրվաձ վկա:
Բայց դե իսկին իրապր՝ ինչ,
Դարարկ խոսք է, ուրիշ՝ ոչինչ:



*Արծիվը էլ չհամարեց,
Իտելագարին վերև հանեց,
Իսկ բարձունքից երբ բաց թողեց,
Իտենթուկն ընկավ, շունչը փչեց:
06.06.02.*

ՎԳՎՀ ՄՐՁՅՈՒՆԸ

Ասում են, թե ժիր մրջյունը
Մի ժամանակ մարդ է եղել,
Աշխատել է նա օրնիքուն,
Չարչարանքով հողը հերկել,
Մշակել է անդաստանը,
Բերքը լցրել շրեմարանը:
Ու թեպեքև ամբարները
Լի են եղել բարիքներով,
Չի գոհացել իր տրեւաջան
Աշխատանքի պտուղներով:
Ցանկացել է է՛լ ավելին,
Թալանել է ուրիշներին,
Այլոց բերքը ծածուկ կրել
Եվ ցորենի, հատիկների
Պաշարներն է համալրել:
Ասրված վերից երբ տեսել է,
Այդ ամենից զայրացել է,



Մարդու տեսքից նրան զրկել

Ու մրջյունի ձև է տվել:

Այլ կերպար է նա ստացել,

Միջատների շարքը անցել,

Բայց չի փոխել գոյ բնույթը,

Չի մոռացել սովորույթը.

Չեքքը ընկած գարի, ցորեն

Բույնն է կրում ազատորեն:

30.04.11.

ԾԵՐՈՒՆԻՆ ԵՎ ՄԱՀԸ

Աղքատ ծերունին
Ցախը հավաքած,
Շալակը առած,
Մասրիկ կորացած,
Բեռիցը կքված,
Դանդաղկոյ, կամաց
Լեռան քարձունքից
Իջնում էր հոգնած:
Ուժերը հարած՝
Ծերուկը նարեց,
Աշխարհի մասին
Տխուր մտորեց.
-Ես շատ եմ հոգնել
Էս շան փանջանքից,
Էս անքանելի,
Գարշելի կյանքից,



*Որպե՛ն է մահը,
Թող գա ու քանի,
Ծանր բեռից էլ
Ընդմիջը ազատի:
Դեռ չէր ավարտել
Խոսքը ծերունին,
Մեկ էլ թիկնոցով,
Գերանդին ուսին,*


Սև կերպարանքով՝
Տույժ սարսափազդու,
Տայրնվեց մահը՝
Ղեկը, ահարկու:
-Կանչեցի՞ր դու ինձ,
Եկել եմ ահա,
Ես քեզ լսեցի,
Շուր մորդ եկա,
Որ հոգիդ առնեմ
Եվ հերս քանեմ,
Ցավից, քանջանքից
Իսպառ սզարեմ:
Ղկորն իսկույն
Վախից քար կրրեց,
Թուրը չորացավ,
Գույնը խիստ գցեց,
Լեզուն քերանում

*Մի կերպ պարտեց
Ու կնկնալով
Պարասխան րվեց.
-Խոսքերս բնավ
Ճիշտ չես հասկացել,
Ո՞վ է էս կյանքից
Նոզնել, ձանձրացել,
Կանչել եմ ես քեզ,
Որ գաս, ինձ օգնես,
Ցախով լի պարկը
Շալակս դնես:*

28.07.08.

ԻՇՈՒԿՆ ՈՒ ՔԱՅԼԸ

Էշը դաշտում հանգիստ կանգնած
Արածում էր, մեկ էլ հանկարծ
Ծերուկ գայլը սաստիկ քաղցած
Եկավ-կանգնեց նրա դիմաց:
Իշուկն իրեն չկորցրեց,
Կատ ձևացավ,
Իր էշ հայով ախոյանին



Տիմարացրեց, զվարթ սասալ.
-Բարո՛ւ Ես դու Էսրեդ եկել,
Ասրված է քեզ մոտս դրկել,
Գիրե՛ս՝ ոտս փուշ է մրել,
Թե ուզում ես դու ինձ ուրել,
Էդ անպերթին հանի՛ր, նոր կեր,
Ա՛յ գայլ ախպեր:
Աղաչում եմ, շուր դարմանիր,



*Մի ճար արա, արագ հանիր,
Եթե ուրեւ հանկարծակի,
Տե՛ս, փայրասկը քեզ չծակի:
Էշը նրան այսպէս ծաղրեց,
Որքը հապճեպ վերև ցցեց,
Որ անբակի փուշը հանի,
Իսկ երբ գայլը ուզեց զննի,
Անբողջ ուժով նա հարվածեց,
Անուղեղի արամները
Տեղնուրեղը փորը ստեց:
Գիշարիչը ցավից ոռնաց,
Տնքրնքայով հագիլ սասց.
-Ո՛վ է րեսել, որ ի ծնե
Մսագործը բժիշկ դառնա,
Տե՛ղն է ինձ, հա՛'...*

05.08.08.

ԱՆՔԱԽՏ ԱՎԱՆԱԿԸ

Այգեպանը էշ էր պահում,
Անշատի բեռնում ու չարչարում.
Խեղճ իշուկը շատ աշխատում,
Քիչ ուրում էր, շուր հոգնում էր,
Չեռքից-ուրքից էլ ընկնում էր:
Տանգիստը չունեւ աշխատանքից,
Դժգոհ էր իր չարքաշ կյանքից:



Այդ փրանջանքին չհիմնացալ,
Երկնավորին գանգաւր արալ,
Բահարն անհծեց, արցունք թափեց,
Ուրքերն ընկալ ու պաղարեց,
Նոր փեր ինդրեց:
Աւարվաճ իդնաց և իշուկին
Կալվագործի մոյր ուղարկեց,
Սակայն այնրեղ փարաքախար
Ավելի վար վիճակուն էր.
Առավորից մինչ իրիկուն
Քուն ու դադար բնալ չուներ,
Գիշեր ու զօր նա բանուն էր,
Սովաճ-ճարալ, հայից ընկաճ,
Գլուխը կախ ծառայուն էր:
Բրուրից էլ գոհ չմնաց,
Կրկին Աւրժո դուռը գնաց:
Արարիչը շար մըրաճեց



*Եվ այս անգամ ալիանսկին
Կաշեգործի մոտ ուղարկեց:
Չորքուրանին երբ որ տեսավ՝
Արհեստավորն ինչ է անում,
Ինչպես է նա հեզ կենդանու
Կաշին մաշկում ու քիկ հանում,
Գլխի ընկավ,
Թե իր վերջը ինչ կլինի,*

Որ ինքն էլ է կանգնած հերթի,
Ել վաղ թե ուշ կաշեգործը
Իր կաշին էլ պիտի քերթի:
Բայց դե, ցավոք, ուշ հասկացավ,
Իրեն վրա խիստ բարկացավ,
Դարարկ գլխին նա վայ քվեց,
Աղիողորմ լացուկոճեց:
Ահա թե ինչ ուսուցանեց
Մույն առակը,
Թե րերերից չդժգոհեր ավանակը,
Ունեցածով լուռ գոհանար,
Չար բախրի դեմ չընթրուրանար,
Այս վախճանին միգուցե և
Երբևիցե չարժանանար:

31.07.08.

ՎՈՒՐԱՄՈՒԿԸ

Լույսից հեռու՝ գեղնի փակին,
Բնակվում է անբողջ փարին
Միջափակեր մի կաթնասուն,
Որին խլուրդ կամ էլ այլ կերպ
Գեղնամուկ են մարդիկ ասում:
Այդ խլմուկը՝ կուրամուկը,
Իրակամում կուրաչք մուկ է
Եվ ինչքան էլ լինի հմուկ,
Չի փարբերում՝ ո՛չ լույս, ո՛չ մութ,
Ո՛չ փայլ, ո՛չ հաց,
Բայց նա մի օր մորը ասաց.
-Գիրե՛ս, մայրի՛կ, որ քո բալիկն
Սկսել է արդեն փեսանել
Ու փարբերել կավը քարից,
Խոտը՝ ծառից, լավը՝ վարից:
Մայր խլուրդը շար գարնացավ



*Եվ որպեսզի ձագին փորձի,
Խնկի հատիկ քվեց, սասալ.
-Թե քեանում ես, սասա՛ ինչ է:
Չագուկն էլ՝ թե.
-Տասարար խի՞ն է:
-Վա՛յ իմ գլխին,
Իմ խեղճ որդին
Բուրումնավեր խունկը*



Խնայից չի քարքերում:

Կասկած չկա, նա ոչ միայն

Այն չի տեսնում, այլ կարծես թե

Նորարարությունն է կորցնում:

02.08.08.

ԷՇՆ ՈՒ ԱՌՅՈՒԾՔ

Էշն ու առյուծը
Օրերից մի օր
Բարեկամացան,
Եղբայրներ դարձան:
Դաշինք կնքեցին,
Խոսարոււմ քվեցին
Մեկմեկու օգնել,
Դժվար պահերին,
Տիրուր օրերին
Իրար սարսաբել:
Ախպեր քղերքը
Առավոտ կանուխ
Գնացին որսի
Ու ճամփի կեսին
Տեսան մեծ քարայր՝
Այծիկներով լի:



*Եվ որոշեցին՝
Երկարականջը
Անձալը մորնի,
Մի հնար գրնի,
Նրանց դուրս անի,
Արքան էլ բռնի,
Պոզերից քաշի,
Կացարան տանի:*

Ոնց մտածեցին,
Այդպես արեցին:
Առյուծը կանգնեց
Այրի մուրթի մոտ,
Իսկ ախանակը՝
Անվախ ու սրտոտ,
Քարայր խցկվեց,
Էշի գոռոցով,
Ծափ ու գոռոցով,
Տարայ-հրոցով
Նրանց վախեցրեց:
Վայրի այծերը
Իշային տեսքից,
Տանաժ ձայներից
Ահարեկվեցին,
Վախը սրտերում,
Պատրի ծեփ դառաժ՝

Ահով ու դողով
Ելքը փնտրեցին:
Խելառ իշուկը
Իր հնարանքից
Թունդ ոգևորվեց,
Ինքն իրենից գոհ,
Գլուխ գովելով՝
Պարծանքով խոսեց.
-Լա՛վ վախեցրի, չէ՛,
Վայրի այծերին,
Դարձրի նրանց
Նիւս մեր գերին
Եվ գործն էլ արի
Կարծես անթերի:
Իսկ թագավորը
Բեղի քակ ժպտաց,
Ծաղրելով սասաց.

Ես էլ անկասկած
Կվարտենայի...



-Ղիպե 'ր ալամակ,
Ճիշոր որ ասեմ,
Քո ով լինելը
Թե չիմանայի,
Էդ զոզոռցից,
Նարայ-իրոցից,
Ես էլ անկասկած
Կվարտենայի...

04.05.11.

ՄՍՏՂԱ ԳՈՒՇԱԿԸ

Ասրդագուշակը
Ամեն իրիկուն
Տնից դուրս գալով՝
Երկինք էր նայում,
Ասրդերն էր համբոււմ,
Նաշվարկներ անում:
Մի երեկո էլ
Մտքերով քարված,
Աչքերը հեռու
Ասրդերին հառած՝
Քայլերը ուղղեց
Դեպի ջրհորը,
Բայց, ցավոք սրտի,
Երկու քայլ չարած՝
Ընկավ խոր հորը:
Մի անցորդ տեսավ,
Նեղնանքով ասավ.



*-Ողորմի հորդ,
Ա՛յ դու խելացի,
Առաջդ նայի՛ր,
Նոր ճամփադ անցիր:
Ուզում ես րեանել՝
Ինչ կա երկնքում,
Միևչեռ առջևդ
Անգամ չես րեանում...*

28.07.08.

ՄԵՍՆԱՂՆ ՈՒ ԳՈՂԸ

Գողը գյուղում մի փուն մրավ,
Շար փորփրեց, քան չգրավ,
Բակում փեաավ գոռոզ-մոռոզ
Ման էր գալիս չաղիկ խորոզ:
Դեռ-դեն նայեց, մարդ չընաավ,
Ճանկեց նրան, առավ-թռավ:
Խեղճ արլորի սիրոր ճարեց,



Գույնը զցեց, լեղին պարռեց,
Անմիջապես նա հասկացավ,
Որ իր վերջը արդեն հասավ:
Կամաց-կամաց երբ սիրտը առավ,
Աղաչելով գողին սասավ.
-Խնդրում եմ քեզ, ինձ խնայիր,
Քաղցր աչքով դու ինձ նայիր,
Թե քեզ համար ես անպետք եմ,
Բայց բոլորին հո շատ պետք եմ.
Առավոտը վաղ զի կանչում եմ,
Մարդկանց քնից արթնացնում եմ,
Որ չուշանան բան ու գործից,
Աշխարհանքից կամ դպրոցից:
Ավագակը քնծիծաղեց,
Աքաղաղին պարասխանեց.
-Կարծում ես՝ մե՞ծ բան ես անում,
Ողջ ավանը ոտքի հանում



*Ու չես թողնում, որ գողանամ,
Գաղտնագրողի լուռ հեռանամ:
Ա՛յ դու անխելք, անմի՛ր, անպե՛րք,
Քեզ անհասպատ ուրե՛լ է պեղք:
Այս որ լսեց, հեզ աքլորը
Խիստ մոլորեց,
Թալանչին էլ տեղնուրեղը
Նրա վիզը շուր ոլորեց:*

01.08.08.

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԱՌԱԿՆԵՐ ԵՎ ԼԵ ԳԵՆԴՆԵՐ

II ՄԱՍ



ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԽՍԲԱ ԳԻՐ ԵՎ ՍՐԲԱ ԳՐԻՉ՝
ԿԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
ՍՈՒՏՔԱ ԳՐՈՂ ԵՎ
ՀԱՄԱԿԱՐ ԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՂ՝
ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՏՊԱ ԳՐՎԱԾ Է «ՄՏԱՄՊԱ» ՍՊԸ-Ի ՏՊԱՐԱՆՈՒՄ:
ՉԱՓՍԸ՝ 84X60, 1/16: ԹՈՒՂԹԸ՝ ՕՖՍԵԹ:
ԾԱՎԱԼԸ՝ 3 ՏՊ. ՄԱՍՈՒԼ: